ւոյս Յովհաննէս վարդապետին Ղաղախեցւոյ, աշխատութեամբ միաբանից տեղւոյս. ՌՄՁԴ (=1835)։

—

Երկու կիր սենեակներից մինի վրայ.

Ցիշատակ է այս զոյգ սենեակք հիւրանոց բարեպաշտ Արծրունեան տղա Բարսեղ Նոր-Պայազիդ քաղաքացւոյ. 1860 ամի. ապրիլի 10։

—

Դպրոցական շէնքի վրայ.

Շնորհօքն Աստուծոյ կառուցաւ դպրոցս ի հայրապետութեան Տռ Տռ սր. կաթողիկոսի ամ. Հայոց, արդեամբ բարեպաշտոն Աւետիս Բալայեան Ղուկասեանց Շուշեցւոյ. 1897— ՌՅԽԶ։

—

ՏԱՊԱՆԱԳՐԵՐ

Կղզու արևմտեան ծայրում կանգնած մի խաչքարի վրայ.

'Ր ՈՀԶ թվ. (1227) կանգնեցաւ խաչս բարեխաւսութիւն Արլ Հասանայ. Քրիստոս ողորմեա։

—

Ս. Աստուածածին եկեղեցու դռան մօտ կանգնած խաչքարի վրայ, որի մէջտեղում քանդակուած է խաչելութեան և շուրջը՝ Փրկչի անօրինութեան պատկերները.

Սուրբ խաչս բարեխաւս Հայրապետի և Բեպեկայի. յիշեցէք զՔրիստոս. թվ. ՌՃԲ (=1653). Տրդատ կաղմող։

—

Բլրի գագաթին մի գերեզմանաքարի վրայ.

Ենկիճեցի Մարտիրոս. թվ. ՌՃԽԲ (=1693)։

—

Ս. Աստուածածնի եկեղեցու մօտ մի գեղեցիկ գերեզմանաքարի վրայ.

Թայիրեանց Ղուլի,
Հին տոհմ մեծ աղգի,
Ի Շամքոր ծնեալ
Ի Վիրս պանդխտեալ։

Թողի զՏփխիս,
զԿին զորդիս,
Ցանծնեալ Տեառն զիս,
Մտի յայս կղզիս։
Զերթ Սողոս՝ Պօղոս՝
Ղուլիս՝ Ղազարոս
Փոխեալ ես եղայ
Միանծն սրեղայ։
Երսուն ամ ճգնեալ՝
Ցերկինս փոխեցայ,
Տեսանել զնա
Ում զինուորեցայ։
զԱլէքսանդր որդիս,
Կանգնող արծանիս
Օրհնեա, Տէր Աստուած,
Մինչ ցկատարած։
Մահ իմ ի 1855 ամի
80 ամաց հասակի։

—

Բշնիի մօտերքից բերուած մի մարմարոնեայ տապանաքարի վրայ.

Ընդ այս տապանաւ յուսով նորոգչին
Ցաւերժ պարծանօք ի խաղաղ հանգչին
Ոսկերք իշխանին Բարսղի Արծրունեոյ
Որ տանս հայկազանց էր երեսաց լուսոյ.
Որ եհեղ զքրտունս փոխանակ արեան
Ժառանգեաց զանուն իբր զվարդան.
Թողլով զլիշատակ անհամար բարեաց
Փոխեցաւ ասի ի կեանս անանց.

Ծնաւ 'ի օրն յունիսի 1805 ամի վախճանեցաւ ի օրն յունիսի 1875 ամի։

Նոր խցերի հանդէպ գտնուած մի գերեզմանաքարի վրայ.

Այս է տապան 60 ամ աշխատակրօն Տփխիսեցւոյ առաքինի Մելքոն ճգնաւորի 78 ամեայ փոխեցաւ առ Տէր ի 15 ապրիլի 1862 ամի. ով հանդիպողք տուք ողորմի։

ԱՌԱՆՑ ԹՈՒԱԿԱՆԻ ՏԱՊԱՆԱԳՐԵՐ

Առաքելոց եկեղեցու գաւթի գերեզմանաքարի վրայ.
Այս է հանդիսաւ պարոն Քուրդայ։



Ս. Աստուածածնի եկեղեցին (հնումը)

Կղզու բլրի վրայ մի օրօրոցաձև տապանաքարի վրայ.
Այս տապան է հանդուտի Ամիր Հասանայ։